

ԲԱՆԱՀԱՎԱՔ ՊՈՂՈՍ ՄՈՒՐԱՂՅԱՆ

Բանահավաք-հրատարակիչ Տիգրան Նավասարդյանի հարուստ ֆոնդը, որ պահվում է ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվում, ընդգրկում է XIX դարի 60-ական թթ. մինչև XX դարի առաջին տասնամյակի ընթացքում գրաված մեծաքանակ բանահյուսական նյութեր (13200 միավոր, 4981 էջ ծավալով)։ Այն իր բազմաժանր բնույթով ու ազգագրական տարբեր գոտիների ընդգրկմամբ հիշյալ արխիվի նշանակալից ֆոնդերից մեկն է։ Դրա պատճառն այն է, որ Նավասարդյանը եղել է իր ժամանակի ոչ միայն ամենագործուն բանահավաքներից մեկը, այլև բանահավաքչական գործի եռանդուն նախաձեռնող ու ոգևորող։ Այդ մասին են վկայում արխիվային նյութերին կից եղած բազմաթիվ նամակները, ծանոթագրությունները, առաջաբանները։ Այստեղ առկա վկայություններից պարզվում է, որ վերը նշված բանահյուսական հարուստ նյութերը միայն Նավասարդյանի անձնական գրառումները չեն։ Թերթերում տպագրված ազդերի ու հայտարարությունների միջոցով նա իր շուրջն է համախմբել տարբեր խավերի 40-ից ավելի բանահավաքների, որոնց բոլորի նպատակն է եղել կորստից փրկել մեր ազգային բանավեստի նմուշները։

Նավասարդյանի թղթակից բանահավաքներից ոմանը հետագայում դարձել են հայտնի անուններ (Մանուկ Աբեղյան, Գյուտ Աղանյան, Անուշավան Աբովյան), ոմանք էլ մոռացվել են։ Եվ եթե այսօր դրանք չեն կորել անհետ, ապա դրանում մեծ ծառայություն ունի Տիգրան Նավասարդյանը։

Նշված բանահավաքների մեջ իր թողած վաստակով հատուկ ուշադրության է արժանի Ալաշկերտի Զետկան գյուղի բնակիչ, ուսուցիչ Պողոս Մուրադյանը։ Նրա մասին մեզ կենսագրական որոշ տվյալներ է հաղորդել թոռը՝ Վարդգես Մուրադյանը. ժամանակին նա դրանք լսած է եղել հորից՝ Պարույր Մուրադյանից և տարեց ղետկանցիներից։

Պողոս Մուրադյանը իսկական կրթությունը ստացել է Զետկան և Խաստուր գյուղերի դպրոցներում։ Ուսումը շարունակել է Կոստանդնուպոլսում։ Դասավանդել է էրզրումի Սանասարյան վարժարանում և Ալաշկերտի մի շարք գյուղերի դպրոցներում։ Տիրապետել է թուրքերենին, իմացել է նաև ֆրանսերեն, քրդերեն։ Նա մտերիմ էր Դր. Զոհրապին, որը բազմիցս հյուրընկալվել է Մուրադյանների տանը։

Պողոսը ունեցել է շատ ձեռագիր գրվածքներ։ Խումանյանն ու Շիրվանզադեն խորհուրդ են տվել նրան դրանք ուղարկել Թիֆլիս՝ տպագրության, բայց ձեռագրերը հետագայում ոչնչացվել են։ Նա ունեցել է հինգ տղա և երեք աղջիկ։ Պարույրին և Հրանտին հաջողվել է փախչել Արևելյան Հայաստան, մնացածները զոհ են գնացել եղեռնին։

Պողոս Մուրադյանի մասին հիշողություններ կան պահպանված նաև Շիրվանզադեի «Պատերազմի վայրերից» ուղեգրություն-ակնարկում։ Ինչպես հայտնի է, 1914 թ. նոյեմբերի կեսերին Շիրվանզադեն և Խումանյանը մեկնել են Արևմտյան Հայաստան, պատերազմի վայրերը։ Նրանք Զետկան գյուղում հյուրընկալվել են Պողոս Մուրադյանի տանը։ Այդ զառամյալ ծերունու մեջ Շիրվանզադեն տեսել է մի քնքույշ ու բարի հոգի՝ մտահոգված իր հայրենիքի ճակատագրով, լցված մռայլ խոհերով իր ժողովրդի գալիքի նկատմամբ։ Իր տան շեմին դիմավորելով Շիրվանզադեին ու Խումանյանին, Պողոս Մուրադյանը տուն է հրավիրում նրանց ասելով. «Պողոս Մուրադյանին տանը ձեզի նման մեծարժեք հյուրերին համար բան չի պակսեր»¹։

Շիրվանզադեին հիացնում են ժամանակի դեմքերի ու իրադարձությունների վերաբերյալ Պողոս Մուրադյանի արած խելամիտ դատողությունները։ Վերջինից եղավ հեղինակ այս սուսկալի պատերազմին, աշխարհ հրդեհեց իր փառքին համար... Համիդ դիպլոմատ է, խորամանկ։ Թող ուրա տա ինձ քառասուն հրացանակիրներ, մի քանի օրից ամբողջ Ալաշկերտ կմաքրեմ անօրեններից»²։

Պողոս Մուրադյանի ժառանգությունը ապացույց է այն բանի, որ նա երիտասարդական տարիներից լցված է եղել հարազատ ժողովրդին բուրրանվեր ծառայելու գաղափարով։ 1880-ական թթ. նրա գրառած նյութերի ձեռագիր ժողովածու «Նշխարք գեղջկական գործոց» վերնագրով, որ Պերճ Պոռչյանի միջոցով հասել է Տիգրան Նավասարդյանին, պարունակում է նմուշներ աշուղներ Զաքեի, Այտինի, Մելքոնի, Բազդասարի երգերից, ժողովրդական պարերգեր (թաղալուներ), խաղիկներ, մանկական երգեր, ծիսական երգեր («հարսի գովանք»,

¹ Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հատ., 9, Երևան, 1961, էջ 168։

² Նույն տեղում։

«Բաղրևանդոց թագավորի դովասանքը»), երգի-ծական երգեր, առած-ասացվածքներ, հանելուկներ, աղոթքներ, օրհնանքներ, տեղանունների հետ կապված ավանդություններ, երգի-ծական գրույցներ, սովորություններ, ծեսեր: Ժողովածուի առաջարանից պարզվում է, որ Մուրադյանն այդ նյութերի գրառումները ձեռք-տել է ծառայեցնել հետագա գիտական հետազոտությունների, հատկապես բարբառների ուսումնասիրության նպատակին: «Ժամանակե մը ի վեր,— գրել է նա,— խնդիր է իմանալ գավառական հրատարակությունների բարբառն ու լեզուն, ո՞նք, նոցա ծագումն ու բաժանումը: Սորա վրա ոմն այսպես, ոմն այնպես իրենց կարծիքներն ու գործերը հրատարակեցին: Ես ևս ամենեն հետինը, որ կյանքիս մեծ մասը հայաբնակ գավառոց բուն Հայաստանի ժողովրդոց մեջ անցուցած եմ, շատ բան տեսած ու լսած, փոքր ի շատե պարտք մը համարեցի ինձ հայրենյացս բանավոր ավանդությանց նշխարները և նոցա վրա կազմած գաղափարներս հայտնելը»³:

Բանահյուսական նյութերի գրառման ընթացքում Պողոս Մուրադյանը կիրառել է այնպիսի սկզբունքներ, որոնք անտեսվում էին ժամանակի շատ բանահավաքների կողմից: Գյուղի յուրաքանչյուր բնակիչ, եթե չդիտեր գրել, կարդալ, անցյալում բանահավաքների կողմից համարվել է ժողովրդի ներկայացուցիչ և այն, ինչ գրել է առնվել նրա բերանից՝ համարվել է ժողովրդական իմաստություն և ազգային մշակույթի մի երևույթ: Բանահավաքին հետաքրքրել է ժողովուրդն ընդհանրապես և ոչ ասացողն իրեն անհատ: Եվ քանի որ բանահյուսությունը բանահավաքների պատկերացմամբ համարվել է համազգային արժեք, այն էլ՝ խորը նույնությունից եկող, (որը կարող է անհետանալ), նրանք անհրաժեշտ չեն համարել նշելու ասացողի անունը:

Մուրադյանը մի քայլ առաջ անցավ իր նախորդներից՝ ընդունելով անհատի դերը բանավոր ստեղծագործության պահպանման գործում: Ավելին, նա նշեց նաև ասացողի սեռը, տարիքը, ծագումը, մասնագիտությունը: Գրառումներին կից Մուրադյանն այս կարգի տրվել է թողել բանասացների մասին. «Հավաքածս երգերու մեծագույն մասն ասացի Բղնունյաց դավառի Բեղութ զեղչեն կոյր աշոք աշուղ Մանուկ Վարդանյանը՝ 60-ամյա հայոց գավառական երգերի խոսնակ գանձապահը»⁴:

3 ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ, ԴԲԻ: 3011:

4 Նույն տեղում:

Աշուղներին համարելով յուրահատուկ պանծապահ, Մուրադյանը դրանով իսկ ընդգծում է նրանց դերն իբրև բանահյուսական նյութի կրողի ու պահպանողի: Մուրադյանի համոզմամբ բանահյուսական նյութի կրող են ոչ միայն առանձին անհատներ, այլև ողջ դեր-դաստաններ: «Մանուկ Վարդանյանի հայրը և հոր հայրը,— գրում է նա,— ինքնաստեղծ ճշմարիտ բանաստեղծներ են եղած, որ ավանդաբար, բերնե-բերան, անկորուստ և անփոփոխ մեզ ընծայեցին»⁵:

Բանահավաքչական գործունեության ընթացքում Մուրադյանը հատուկ ուշադրություն է դարձրել ասացողի վարպետության, նրա տաղանդի, հիշողության վրա, որպես խիստ կարևոր գործոնների: «Նույն աշուղ Մանուկը բանաստեղծական կանոնները քաջ գիտեր՝ պատմելու միջոցին կետադրության տեղերը, տունները, վանկերը, հանգր, հանգիստը, մտքերի հաջորդականությունը: Կհայտնեի, նաև, գավառական հնչումները: Բարբառների արտասանությունը խիստ լավ էր»⁶:

Պողոս Մուրադյանի հաղորդած այս տվյալները արժեքավոր են հայ բանագիտության պատմության սկզբնական շրջափուլի մասին պատկերացում կազմելու տեսակետից: Բանահավաքներից ոմանք, սկսած XIX դարի 60-ական թթ., բացառիկ դեպքերում է, միայն, որ նշել են ասացողի անունը (Բահաթրյաններ), ոմանք էլ, գիտակցելով անվան հիշատակման անհրաժեշտությունը, այնուամենայնիվ, դանց են առել այն, ընդհանրապես համեստությունը չհաշու համար»⁷: Իսկ Սրվանձությանը, խոսելով բանահյուսական երգեր հորինող ու կատարող «կնքյալ բերան սափորներին» (իմա ժողովրդական անանուն երգիչների ու բանասացների) մասին, միայն ընդհանուր կարգով է նշել նրանց ստեղծագործական խառնվածքի յուրահատկությունները, որովհետև՝ «վարդապետին չեն դրուցեր, անվայել դատելով»⁸:

Այսպիսով, Պողոս Մուրադյանը նավասարդյանի 40-ից ավելի բանահավաքների մեջ միակն է, որ Գր. խալաթյանի հայ ազգագրության «Ծրագիրը» (1887 թ.) լույս տեսնելուց շատ տարիներ առաջ հոգացել է բանասացների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ հաղորդելու մասին: Ուշագրավ է նաև այն, որ Պողոս Մուրադյանը, բանահյուսական որոշ

5 Նույն տեղում, 3013:

6 Նույն տեղում:

7 Գ. Տեր-Ալեքսանդրյան, Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, Թիֆլիս, 1885, էջ 427:

8 Գ. Սրվանձության, Երկեր, հատ. 1, Երևան, 1978, էջ 418:

Նյութերին կից տվել է բանասիրական քննությունի-
ն ժանոթագրություններ, անդրադարձել տարբեր
ստեղծագործությունների ժանրային առանձնա-
հատկություններին: Ժողովրդական խաղիկներին
մասին, օրինակ, նա գրել է. «Թաղալուն ուրիշ
բան չէ, բայց եթե բառերու հավաքածու մը,
որ սահմանված է ոտանավոր ձևով: Թաղալու-
ներով է, որ դաուլ-դուռնայի տեղ, գյուղացիք
ձայնալիր եղանակով պարաշղթա մը կը խա-
ռացնին, կը պարին»⁹:

Իր գրի առած բանահյուսական նյութերը Պո-
ղոս Մուրադյանը խնամքով արտագրել, ժան-
րային դասակարգման է ենթարկել, հավանա-
բար, այն հույսով, որ երբեք կտպագրվեն.
«Այս գրքույկիս դասավորությունը, որ ընտրու-
թյամբ եղած է, այսինքն՝ բարոյական, քնա-
րական բանաստեղծությունք, պարերգեր, ման-
կական երգեր ու խաղեր, աղոթքներ ու օրհնու-
թյուններ, անեծքներ, առածներ, հանելուկներ,
քաղում անձանց ասույթներու Բաղդատելով ընդ
միմյանս, ավելի ուղիղ համարվածը նույնու-
թյամբ և անփոփոխ գրի առած եմ, զոր անդ-
շանիկ աշխատությունս՝ «նշխարք գեղջկական

գործոց սրտիս աննյութ թելերի նվագավոր
դաշնակցությամբ հայրենյացս կնիփրեմ¹⁰,

Զնայած Մուրադյանին չհաջողվեց իր ձեռագիր ժողովածուն ամբողջությամբ հրատարակել, սակայն Տիգրան Նավասարդյանի ջանքերով նրա նյութերի մեծ մասը տպագրվեց «Հայ ժողովրդական հեքիաթների» 6-րդ (1890 թ.) և 7-րդ (1891 թ.) գրքերում:

6-րդ գրքում տպագրվել է 4 երգիծական և 1 գուժանի երգ, 38 խաղիկ, 4 պարերգ, 8 մանկական երգ, 3-ական երգ՝ աշուղ Ջաքեից, աշուղ Այտինից, 2-ը՝ աշուղ Մելքոնի երգերից և 4-ը՝ աշուղ Հաղդասարի երգերից: 7-րդ գրքում տպագրվել է 98 առած-ասացվածք:

Պողոս Մուրադյանի թողած համեստ ժառանգությունը այսօր էլ չի կորցրել իր նշանակությունը: Նրա գրի առած բանահյուսական ստեղծագործությունները գիտական ուսումնասիրության արժեքավոր նյութեր են բանագետի, ազգագրագետի ու բարբառագետի համար:

ՍՎ. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԶՈՎՈՒՆԻՒ ԵՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զովունի գյուղը (նախկինում՝ Մուլլաղասում) պատմական նիգ գավառի մասը կազմող Ապարանի շրջանի հնագույն գյուղերից էր¹, գտնվում էր Ապարանի կիրճի սկզբնամասում: Քասաղ գետի ձախ ափին, ներկայիս Ապարանի ջրամբարի ամրադրակից 1,5 կիլոմետր հյուսիս:

Զովունին հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով: IV—V դդ. այստեղ կառուցվել են երկու մեծ և երկու փոքր եկեղեցիներ, վաղ միջնադարյան և միջնադարյան գերեզմանատներում կանգնեցված են քանդակազարդ սյուներ, խաչքարեր, տապանաքարեր: Դրանում, ինչ խոսք, մեծ է զավառի տերերի՝ Գեթունի իշխանների ավանդը: Տեղին է նշել, որ Գեթունիների տոհմի ներկայացուցիչների անվան հետ կապված հիմնական հիշատակությունները վերաբերում են Զովունի գյուղին:

⁹ Հնազիտություն և ազգազրության ինստի-
տուտ, բանակչություն, արխիվ, FBI: 3077:

1967 թ. գյուղի տարածքը մնացել է Ապարանի ջրամբարի տակ: Այդտեղ գտնված հուշարձաններից Սուրբ Վարդանն ու Քույր Մանուկը տեղափոխվել ու վերակառուցվել են գյուղի Արենիյան խաչեր կոչվող բարձունքում: Մյուս հուշարձանները մնացել են իրենց տեղում:

Զովունի գյուղի պատմաճարտարապետական հուշարձանների մասին գրվել են գիտական ուսումնասիրություններ ու հոդվածներ²։ Նշվել է այդ հուշարձանների՝ հատկապես Պողոս-Պետրոս եկեղեցու բացառիկ դերը հայկական ճարտարապետության զարգացման փուլերի ուսումնասիրության համար³։

Զովունիում վիճագիր արձանագրությունները
շատ չեն: Եկեղեցիների ռմերից և մերձակա-
րից մենք հավաքել ենք 14 արձանագրություն:

10 նույն տեղում, 3095:

2 Թ. Թ ր ա մ ա ն յ ա ն, Նյութեր Հայկա-
կան ճարտարապետության պատմության, հատ.
2, Երևան, 1948, էջ 128: «Հայկական սովե-
տական հանրագիտարան», հատ. 3, Երևան,
1977, էջ 702—703: 4. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն,
Ճարտարապետական հուշարձանների վերանո-
րոգումը Սովետական Հայաստանում, Երևան,
1978, էջ 153—155: Ա. Ս ա հ ի ն յ ա ն, Զո-
վուհիի ճարտարապետական խումբը, ՀՍՍՀ ԳԱ
«Լրաբեր», (հաս. գիտ.), 1968, № 1, էջ 101—
120: Վ. Պ ե տ ր ո ս յ ա ն, Գնթունիներ՝
հկեղեցաշինարար, «Էջմիածին», 1979, ԺԲ (12),
էջ 46:

3. Ik. U am 7 h 5₁ m 5₁, b₂d, m₂/m₁, t₂ 114: